

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ N 43/1

ք.Երևան

20 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 19.02.2018թ. N1501649 վարչական ակտի դեմ Ա/Ձ Արսեն Միրզոյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Ա/Ձ Արսեն Միրզոյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 19.02.2018թ. N1501649 վարչական ակտի դեմ, որով կիրառվել է ՀՀ Հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

ՀՀ Հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 19.02.2018թ. N1501649 վարչական ակտը ուժի մեջ է մտել 20.02.2018 թ., սակայն դրա դեմ բողոքը տրվել է 13.07.2018թ.՝ վերոգրյալ իրավանորմով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արսեն Միրզոյանի կողմից բաց է թողնվել ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 19.02.2018թ. N1501649 վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Արսեն Միրզոյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:
Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

